# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արարատի մարզի, Քաղցրաշեն
համայնք, Խ. Աբովյան 22, Հեռ. (093)
436645 , qaghtsrashen.ararat@mta.gov.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆԻՆ

N 160
*18 դեկտեմբեր 2020թ.*

Կից ներկայացվում է Քաղցրաշեն համայնքի ավագանու թիվ 26, 27, 28, 29, 30, 31 որոշումների կրկնօրինակները:

Առդիր՝ 21 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (093) 436645, qaghtsrashen.ararat@mta.gov.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 26

## ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.12.2020Թ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Քաղցրաշեն համայնքի ավագանու 14.12.2020թ թիվ 8 նիստի օրակարգը.

1.Տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին

2.Քաղցրաշեն համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

3. Մանկապարտեզի և երաժշտական դպրոցի 2021թ ծնողական գումարների մասին

4. Քաղցրաշենի համայնքապետարանի 2020թ բյուջեում փոփոխություն կատարելու մասին

5.Քաղցրաշենի համայնքապետարանի 2021թ բյուջեն հաստատելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՆՅԱԶՅԱՆ ԳՈՌ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՁԻԶ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (093) 436645, qaghtsrashen.ararat@mta.gov.

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 27

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ և ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝ Քաղցրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Սահմանել Քաղցրաշեն համայնքում 2021թ տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար

ա) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դարմ

բ) սույն կետի (ա) ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000դրամ,

-500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20000 դրամ,

-1000-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000դրամ,

-3000-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ

գ) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500դրամ

-20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500դրամ

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարական թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մինչև 1500 դրամ

բ) Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքերից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի (ա) ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը .

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ

4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ 200000 դրամ:

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ:

6) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ

բ) 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500դրամ

գ) 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ

դ) 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ

ե) 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ

զ) 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) Մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ

բ) 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5500 դրամ

գ) 50-ից մինչև 100քմ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ:

դ) 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000դրամ

ե) 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000դրամ

զ) 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ

7) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 1 քմ-ի համար՝ 150 դրամ

8) Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 20000 դրամ

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 35000դրամ

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000դրամ

դ) խաղատների համար՝ 300000 դրամ

ե) շահումով խաղերի համար՝ 200000դրամ

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 60000 դրամ

9) Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա) հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ

-26-ից 50քմ ընդհանուրմակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000դրամ

-50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ

-100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 դրամ

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ

-500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000դրամ

բ) ոչ հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500դրամ

-26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000դրամ

-50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000դրամ

-100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000դրամ

-200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ

-500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ

10) Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամիս 1 քմ-ի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 700 դրամ

11. Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է 0,5 գործակից։

3. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 1000 դրամ փոխհատուցման վճար

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական վճար ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ

5. Աղբահանության վճարի դրույքաչափեր սահմանել՝

1) Քաղցրաշեն համայնքում հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100դրամ

2) Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում աղբահանության վճար սահմանել ըստ շինարարության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով

ա) Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով 1քմ մակերեսի համար՝ 50 դրամ (ամսական)

բ) Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ 1քմ մակերեսի համար՝ 20 դրամ (ամսական)։

գ) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1քմ մակերեսի համար՝ 5 դրամ (ամսական)

դ) Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ մակերեսի համար՝ 3 դրամ (ամսական)

6. Անասնաբուժական ծառայության վճար սահմանել 1 պայմանական միավոր գլխաքանակի համար 200 դրամ (տարեկան)։

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՆՅԱԶՅԱՆ ԳՈՌ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (093) 436645, qaghtsrashen.ararat@mta.gov.

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28

## ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 28-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, մանկապարտեզի և երաժշտական դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը (հավելված 1,2,3)

Հավելված 1

14.12.2020թ կայացած Քաղցրաշեն

համայնքի ավագանու N28- Ն որոշման

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱ ՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

2021թ

1. Աշխատակիցների քանակը՝ 18
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Համայնքի ղեկավար | 1 | 250000 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 197000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 197000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ | 2 | 195000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 2 | 130000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 129000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 116000 |
| Ընդամենը | | **1539000** |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Պահակ | 1 | 100000 |
| Հավաքարար | 2 | 93000 |
| Կատարածու | 1 | 93000 |
| Ընդամենը | | **379000** |
| Պայմանագրային աշխատողներ | | |
| Գրադարանավար | 1 | 100000 |
| Գործավար | 1 | 115000 |
| Անասնաբույժ | 1 | 132000 |
| Բուժ.ամբուլ. վարորդ | 1 | 93000 |
| Ջրմուղ կոյուղի սպասարկ | 1 | 93000 |
| Ընդամենը | | **533000** |
| | 19 | **2451000** |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

Հավելված 2

14.12.2020թ կայացած Քաղցրաշեն

համայնքի ավագանու N28-Ն որոշման

ՔԱՂՑՐԱՇԵՆԻ «ԱԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

2021թ

1. Աշխատակիցների քանակը՝ 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | Համայնքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամով/ |
|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 |
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 150000 |
| 2 | Դաստիրակ/3/ | 3,0 | 88400 |
| | Դաստիրակ/2/ | 2,0 | 93100 |
| 3 | Դաստիրակիօգնական/1/ | 1 | 88400 |
| | Դաստիրակիօգնական/1/ | 1 | 93100 |
| 4 | Բուժքույր | 1 | 93100 |
| 5 | Հաշվապահ | 1 | 93100 |
| 6 | Խոհարար | 1 | 88400 |
| 7 | Տնտեսվար | 1 | 88400 |
| 8 | Դռնապան | 1 | 88400 |
| 9 | Պահակ | 1 | 93100 |
| | Ընդամենը | 14 | 1327400 |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

Հավելված 3

14.12.2020թկայացածՔաղցրաշեն

համայնքի ավագանու N 28-Ն որոշման

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏ. ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

2021թ

1. Աշխատակիցների քանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | Համայնքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամով/ |
|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 |
| 1 | Եր. դպրոցի տնօրեն | 1 | 150000 |
| 2 | Ուսուցիչներ /5/ | 6,1 | 93100 |
| 3 | Ուսուցիչներ /7/ | 6.7 | 88400 |
| 4 | Ուսուցիչ/պարի/ | 1 | 93100 |
| 4 | Հաշվապահ | 1 | 93100 |
| 5 | Հավաքարար | 1 | 88400 |
| | | | |
| | Ընդամենը | 16,8 | 1584790 |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՆՅԱԶՅԱՆ ԳՈՌ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (093) 436645, qaghtsrashen.ararat@mta.gov.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 29

### ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2021թ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի համար (ծնողական գումար) յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 6000 դրամ: Մի ընտանիքից երկու և ավելի երեխայի համար՝ առաջին երեխայի վարձ սահմանել 6000 դրամ, հաջորդ յուրաքանչյուր երեխաների վարձերը՝ 4000 դրամ: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ծնողական չի վճարվում, համայնքի բնակիչ չհանդիսացող երեխաների համար ծնողական գումար սահմանել ամսական 8000 դրամ:

Երաժշտական դպրոց հաճախող մեկ երեխայի համար (ծնողական գումար) ամսական սահմանել 5000 դրամ, երկու և ավել երեխաների համար՝ առաջին երեխայի վչաձ սահմանել 5000 դրամ, հաջորդ յուրաքանչյուր երեխաների վարձերը՝ 3000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՆՅԱԶՅԱՆ ԳՈՌ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ կողմ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ

ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ կողմ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (093) 436645, qaghtsrashen.ararat@mta.gov.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30

## ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2020Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Ֆոնդային բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ֆոնդային բյուջեի եկամտային մասը ավելացնել 10959460 դրամով՝ ի հաշիվ հողի օտարումից ստացված մուտքերի

2.Ֆոնդային բյուջեի եկամտային մասից 10959460 դրամը տեղափոխել 09.08.01.51 (կրթության այլ դասին չպատկանող) գ.ծ. դասակարգման 5129 (այլ մեքենաներ ու սարքավորումներ) հոդվածին՝ մանկապարտեզի համար գույք ձեռք բերելու նպատակով:

Վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի եկամտային մասը պակասեցնել 2400000դրամով՝ հաշվի առնելով, որ մանկապարտեզը չի գործել և, հետևաբար, ծնողական գումարներ չեն գանձվել, նշված գումարի չափով պակասեցնել 09.01.01.51 (նախադպրոցական ուսուցում) գ. ծ. դասակարգման 4511 հոդվածին հատկացված գումարը

2. 09.01.01.51 գ.ծ. դասակարգման 4511 հոդվածից 1700000 դրամ հատկացնել 01.01.01.51 գ.ծ. դասակարգման (կառավարման մարմնի պահպանում) 4112 պարգևատրում հոդվածին՝ համայնքապետարանի աշխատակազմին պարգևատրելու համար:

3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 400000դրամ հատկացնել 10.07.01.54 (սոցիալապես անապահով անձանց աջակցություն) գ. ծ. դասակարգման 4726 (հուղարկավորության նպաստ)

հոդվածին՝ համայնքի բնակիչներին հուղարկավորության նպատակով ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

4. 09.01.01.51 գ.ծ. դասակարգման 4511 հոդվածից 200000դրամ հատկացնել 01.01.01.51 գ.ծ. դասակարգման 4212 հոդվածին (էներգետիկ ծառայություն)՝ համայնքապետարանի էլեկտրաէներգիայի ծախսերը վճարելու համար:

5.Իրատեսական բյուջե ունենալու նպատակով, հաշվի առնելով համավարակը, պատերազմը և բերքատվության (հատկապես դեղձի, ծիրանի և այլն) ցածր արդյունքները՝ կատարել վարչական բյուջեի եկամտային մասից 7000000 դրամի չափով նվազեցում, ընդ որոում հողի հարկի մասով՝ 5000000 դրամ, իսկ աղբավճարի մասով՝ 2000000 դրամ: Նվազեցումները կատարել 09.01.01.51 գ.ծ. դասակարգման 4511 հոդվածից:

6.Երաժշտական դպրոցի աշակերտներից հոկտեմբեր ամսվա համար ծնողական գումար չգանձել, քանի որ դասընթացը լիարժեք չի կազմակերպվել:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՆՅԱԶՅԱՆ ԳՈՌ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, (093) 436645, qaghtsrashen.ararat@mta.gov.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31

## ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Քաղցրաշեն համայնքի 2021թ բյուջեն

2021թ վարչական բյուջեի եկամուտները

Եկամտատեսակները

| | |
|---|---|
| Ընդամենը եկամուտներ այդ թվում | 93476.6 հազ դրամ, որից |
| 1.Հարկեր և տուրքեր այդ թվում | 26422 հազ. դրամ |
| 1/1. Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում | 25900 հազ. դրամ |
| Գույքահարկ շենքի և շինությունների, որից | 700,0հազ. դրամ |
| Ֆիզիկական անձանց | 500,0հազ. դրամ |
| Իրավաբանական անձանց | 200,0հազ. դրամ |
| Հողի հարկ, այդ թվում | 16200,0հազ. դրամ |
| Ֆիզիկականաև անձանց | 16000,0հազ. դրամ |
| Իրավաբանական անձանց | 200,0հազ. դրամ |
| Գույքահարկ փոխադրամիջոցներից | 9000.0հազ. դրամ |
| Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվություն այդ թվում՝ | 520,0 հազ. դրամ |
| Տեղական տուրքեր, որից | 522,0հազ. դրամ |

Շինությունների շինարարության թույլտվության համար, որից 50,0հազ. դրամ

Հիմնական շինությունների համար 50,0հազ. դրամ

Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն

Ծխախոտի վաճառքի թույլտվություն 236,0հազ. դրամ

Խմիչքների իրացման թույլտվություն 236,0հազ. դրամ

Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ 53149,6հազ. դրամ

Ընթացիկ ներքին դրամաշնորհներ / դոտացիաներ/ 42724,6հազ. դրամ

Նպատակային հատկացումներ/սուբվենցիա/ 1633.6 հազ. դրամ

Այլ եկամուտներ, այդ թվում 8791.4 հազ. դրամ

Գույքի վարձակալությունից մուտքեր, որից

Հողերի վարձակալություն 4200,0հազ. դրամ

Գույքի Վարձակալություն 25,0հազ. դրամ

Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցում, որից

10180,0հազ. դրամ

Աղբահանության վճար 3000,0հազար դրամ

Ջեռահաղորդակցության համար ծառ. վճար 480,0 հազար դրամ

Ծնողական գումարներ /եր. դպրոց և մանկապարտեզ/ 6200 հազար դրամ

Ծախսային մաս-93476.6 հազ դրամ՝ որից

1.հոդված 4111 աշխատավարձ—32300.0 հազ դրամ, որից կառ մարմին 27500.0, անասնաբույժ-1600հազ դրամ, բուժամբուլատորիայի վարրդի վարձատրություն-1200.0 հազ. դրամ

2.հոդված 4212 էներգետիկ ծառ-ն -3300,0 հազ.դրամ, որից կառ. մարմին էլ.էներգիա 1400.0 հազ. դրամ, գազ-1500,0 հազ դրամ, 350հազ դրամ արտաքին լուսցանցի շահագործման, իսկ 50,0 հազ. դրամ եկեղեցուն լուս.համար

3.հոդված 4213 կոմունալ ծառայություններ-3000.0 հազ. դրամ՝ կազմակերպված աղբահանության ծառայության վճարման համար

4. հոդված 4213 կոմ. ծառ-ն -400.0հազ. դրամ՝ կառավ. ապարատ, որից խմելու ջուր-349.6 հազ. դրամ, դեռատիզացիա -50,4 հազ. դրամ

5. հոդված 4214 կապի ծառ-ն - 300,0հազ. դրամ՝ կառավ. ապարատ (հեռախոս 100հազ. դրամ, ինտերնետ կապ - 200.0 հազ. դրամ)

6.հոդված 4215 ծառայող ավտոմեքենայի ապահովագրություն – 40,0 հազ. դրամ

7. հոդված 4221 գործուղում-50.0 հազ. դրամ՝ կառավարման ապարատ

8.հոդված 4232 համակարգչային ծառ-ն – 200,0 հազ. դրամ (կայք, գույքի բազա)

9.հոդված 4234 տեղեկ. ծառ-ն -400,0հազ. դրամ՝ (թերթեր, ամսագրեր և այլ տեղ.ծառ)

10. հոդված 4235 – 300.0 հազ. դրամ գույքի գնահատման և աուդիտ ծառ. համար

11.հոդված 4239 ընդհանուր բնույթի ծառ.-1750,0 հազ. դրամ որից մշակույթային միջոցառումներ 900.0 հազար դրամ, թատերական միջոցառումներ -200.0 հազ. դրամ, -300,0հազ. դրամ՝ սգո պարագաների ձեռք բերում /ծաղկեպսակներ, սգո պարագաներ և այլ ծառ./

12. հոդված 4239 հակակարկտային ծառայության համար -350,0 հազ. դրամ

13. հոդված 4241 - 1200.0հազ. դրամ՝ որից գույքի իրավունքիպետ. գրանցման համար - 1000հազար դրամ/կադաստր/, հակահրդեհային ծառայություն, գազապառման համակարգի սպասարկման և այլ ծառ համար - 200,0 հազ. դրամ

14.հոդված 4261 գրասեն.նյութեր - 180,0հազ. դրամ՝կառավ. ապարատ՝թղթեր, գրքեր, գրեն. պիտույքներ, քսերոքսիլիցքավորում, նորոգում և այլն:

15. հոդված 4264 – 900,0 հազ. դրամ տրանսպորտային նյութերի (վառելիքի ձեռք բերում) համար

16. հոդված 4267 տնտ. նյութեր – 480,0հազ. դրամ հանրային կենցաղային սննդի նյութերի համար

17.հոդված 4269 հատուկնպատ.նյութեր - 1500,0հազ.դրամ՝ որից նվերների ձեռք բերման համար -800հազար դրամ, աշակերտ.պայուսակների համար-300,0 հազ.դրամ, համավարակի կանխարգելմա համար 200.0դրամ, հատուկ նպատակային նյութեր արտաքին լուսավորության համար էլ. լամպեր -200.0դրամ

18.հոդված 4511սուբսիդիա -20000.0հազ. դրամ մանկապարտեզ

-18000,0հազ. դրամ երաժշ. դպրոց

-1633.6 հազ. դրամ երաժշտական դպրոցին ազգային, լարային և փողային նվագարանների պահպանման համար

19.հոդված 4637 ընթ.դրշ-նպետ և ՊՈԱԿ-ին -300,0հազ. դրամ՝ դպրոցին անապահով ընանիքների աշակերտներին դասագրքերի ձեռք բերման համար

20. հոդված 4726 հուղարկավորության նպաստ – 2000,0հազ. դրամ

21.հոդված 4727 սպորտային նպաստներ 400,0 հազ. դրամ սպորտային, կրթության և գիտության բնագավառում աչքի ընկած մարդկանց պարգևատրելու համար

22. հոդված 4729 այլ նպաստներ – 565,0 հազ. դրամ՝ ֆինանսական աջակցություն տալու համար.

23. հոդված 4819 նվիրատ. այլ շահ. չհետ. կազմ-ին – 370.0 հազ. դրամ

24. հոդված4822այլ հարկեր 120,0հազ. դրամ /բնապահպանական վճարներ, տեխ. զննության համար/

25. հոդված4823պարտադիրվճարներ 80,0հազ. /պետական տուրքեր, բնահ. վճարներ և այլն/

26. հոդված 4841 բնական աղետներից կորուստների վերականգնում 1000հազ դրամ

27. հոդված4891պահուստային ֆոնդ -4708 հազար դրամ

Ֆոնդային մաս

Ֆոնդային բյուջե. /նախատեսվում է/ 20000 հազար դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՆՅԱԶՅԱՆ ԳՈՌ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ

ՄԿՐՏՉՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՓԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Հ Հ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *04200795*